



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2003թ.  
N 334

ք.Ստեփանակերտ

### Օգտակար հանաժոնների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման նպատակով ընդերքօգտագործման լիցենզավորման կարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել օգտակար հանաժոնների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման նպատակով ընդերքօգտագործման լիցենզավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ նշանակա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն ներկայացնել օգտակար հանաժոնների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների մասին իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկատվությունը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով հաստատել օգտակար հանաժոնների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման նպատակով ընդերքօգտագործման լիցենզիայի օրինակելի ձևը:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Տ ա վ ե լ վ ա ծ  
ԼՂՀ կառավարության  
2003թ. ----- „----“, -ի  
թիվ ---- որոշման

**Կ Ա Ր Գ**

**Օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման նպատակով ընդերքօգտագործման լիցենզավորման**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման /շինարարություն և շահագործում/ նպատակով ընդերքօգտագործման լիցենզավորման գործընթացը:

2. Ընդերքօտագործումն իրականացվում է լիցենզիայի հիման վրա, բացառությամբ իրավաբանական անձանց և քաղաքացիների կողմից՝ իրենց հատկացված հողամասերի սահմաններում /անկախ սեփականության ձևից/ սեփական տնտեսական և կենցաղային կարիքները բավարարելու նպատակով կատարվող ստորերկրյա կառույցների շինարարության:

3. Ընդերքօտագործման լիցենզիան տրամադրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը /այսուհետ՝ վարչություն/ ընդերքօտագործման նախագծի առկայության դեպքում:

**II. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ**

4. Ընդերքօտագործման լիցենզիան ստանալու նպատակով դիմումը ներկայացվում է վարչություն:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա/ իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը /եթև ընդերքօտագործողն իրավաբանական անձ է/,

բ/ ընդերքի տվյալ տեղամասի պետական կադաստրում գրանցման վկայականի պատճենը /եթև այդպիսին կա/,

գ/ նախատեսվող ստորերկրյա կառույցի անհրաժեշտության հիմնավորումը՝ նշելով շինարարության, շահագործման հանձնելու և շահագործման ժամկետները,

դ/ նախատեսվող կառույցի հողատարածքի սեփականատիրոջ նախնական համաձայնությունը, եթե առկա են հողօգտագործման հարաբերություններ,

ե/ ստորերկրյա կառույցների շինարարության նախագծի մասին պետական փորձաքննության դրական եզրակացությունը,

զ/ օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը,

է/ այլ տեղեկություններ՝ դիմումատուի հայեցողությամբ:

5. Լիցենզիան տրամադրվում կամ դիմումը մերժվում է վարչության կողմից դիմումն ընդունվելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Դիմումը մերժվելու դեպքում դրա մասին գրավոր ծանուցվում է դիմողին՝ նշելով մերժման պատճառը:

Դիմումը մերժվում է, եթե՝

ա/ դիմումին կից ներկայացված փաստաթղթերը թերի են, կամ դրանցում առկա տեղեկությունները կեղծ են,

բ/ ընդերքի տեղամասը տրամադրվում է այլ ընդերքօգտագործողի:

6. Ընդերքօգտագործման լիցենզիայում նշվում են լիցենզիայի հերթական համարը, տրամադրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, գործողության ժամկետը, լիցենզավորող մարմնի անվանումը, լիցենզավորվող սուբյեկտի անվանումը կամ անունը, ազգանունը, ստորերկրյա կառույցի նպատակը, լիցենզիայի տրամադրման հիմքերը, աշխատանքների կատարման ժամանակացույցն ըստ փուլերի՝ շինարարական աշխատանքների սկիզբը և ավարտը, օգտագործման տրվող ընդերքի տեղամասի տարածական սահմաններն ու ընդերքից օգտվելու հետ կապված լեռնահատկացման սահմանները, կառույցի շահագործման և պահպանման ժամկետները, ընդերքօգտագործման վճարներն ու ընդերքի պահպանության ծախսերը, բնապահպանության միջոցառումների իրականացման ժամանակացույցը և ծախսերը, ստորերկրյա կառույցների շահագործման հատուկ պահանջներ և այլ պայմաններ:

Լիցենզիայի կորստի դեպքում ընդերքօգտագործողին տրամադրվում է կրկնօրինակը:

### III. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

#### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

7. Ընդերքօգտագործման լիցենզիայի գործողությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով:

**ԼՂՏ կառավարության աշխատակազմի  
ղեկավար - նախարար**

**Ս. Գրիգորյան**